2/267/84

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 15 » 01 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0012-21

Ձեռնարկողը՝ ***«Զանգված» ՍՊԸ***
Ք. Երևան, Պ. Սևակի փ. 8/2, 145 փարածք

Գործունեությունը՝ ***Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի շենքային պայմանների բարելավման շինարարական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0012-21

<15> 01 2021թ.

Գեղարքունիքի մարզի Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի շենքային պայմանների բարելավման շինարարական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Զանգված» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ

Ներածական մաս Գավառի պետական քոլեջը գտնվում է Գեղարքունիքի մարզի, Գավառ քաղաքի Ազատության փողոցի 38 հասցեում, որով անցնում են բոլոր ենթակառուցվածքները: Մոտակա բնակելի բազմաբնակարան շենքերը գտնվում են 90մ հեռավորության վրա:

Նախատեսվող գործունեության նպատակն է՝ ապահովել գյուղատնտեսական քոլեջի ուսումնական ծրագրերի արդյունավետ իրականացումը, ինչպես նաև դասախոսական անձնակազմի և ուսանողության համար հարմարավետ պայմաններ:

Նախատեսվող գործնեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի ա. ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործնեության տեսակ:

Նկարագրական մաս. Ներկա դրությամբ քոլեջը բաղկացած է հիմնական ուսումնական մասնաշենքից, նորակառույց ակումբից, հին մարզադահլիճից, կաթսայատնից և ենթակայանից: Տարածքում առկա են ներքին ասֆալտապատ ճանապարհներ: Բերրի հողաշերտի հզորությունը կազմում է 40–60սմ:

- Նոր ուսումնական մասնաշենք՝ նախատեսված 250 ուսանողի համար, ինչն իրենից ներկայացնում է եռահարկ ե/բետոնե շրջանակային համակարգով շինություն: Շենքը համալրված է մասնագիտական լսարաններով և լաբորատորիաներով, նախատեսվել է վերելակ և թեքահարթակներ հաշմանդամություն ունեցողների համար:
- Ներքին հարդարումն իրականավելու է նորարարական և դժվարամաշ նյութերով:

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

- Արտաքին հարդարման համար նախատեսվել է բնական քարերով երեսապատում:
- Գոյություն ունեցող ուսումնական մասնաշենքի մի մասը նախատեսվում է դարձնել կաթի վերամշակաման արդի արտադրամաս:
- Համալիրի սեյսմիկ ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ անհրաժեշտ է գոյություն ունեցող սպորտային մասնաշենքում կատարել վերանորոգման աշխատանքներ՝ լրացուցիչ տեղադրել ե/բ լայնական շրջանակ, ուժեղացնել հիմքերը, ե/բ կողավոր ծածկի սալերը, ե/բ կլոր անցքավոր ծածկի սալերը, աստիճանավանդակը, արտաքին պատերը ներսի կողմից վերանորոգելը, ինչպես նաև կառուցել նոր կաթսայատուն:
- Նախատեսվում է կառուցել 25 գլուխ կովի համար խելացի անասնագոմ, ներառյալ՝ մեքենայացված կաթի հրապարակով և անասունների զբոսանքի ցանկապատ տարածքով, 100 տոննա խոտի կուտակման պահեստ՝ ծածկված պրոֆիլավոր ցինկապատ թիթեղով:
- Գյուղատնտեսական տեխնիկայի ծածկված կայանման տարածք՝ 4 տրակտորի համար:
- Ապահովել ջրատաքացուցիչներով և ֆոտովոլտային պանելներով այլընտրանքային էներգիայի աղբյուրներ:
- Տարածքում նախատեսվել է բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ, ինչպես նաև նախատեսվում է կառուցել նոր մինի ֆուտբոլի մարզադաշտ:

Ըստ առաջադրանքի քանդվող և նախատեսվող շինությունների մակերեսը կկազմի.

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի ակադեմիկոս Ա.Թամամշևի անվան պպետական գյուղատնտեսական քոլեջի նախագծային աշխատանքներ	Ք.մ.
Քանդվող մասնաշենք	926.5
Նոր կառուցվող ուս. մասնաշենք	1182
Վերակառուցվող և ուժեղացվող մարզադահլիճ	752.8
Անասնագոմ	367.4
Մարզահրապարակ	1026.9
Շվաքարան թիվ 1	162.4
Կաթսայատուն	39
Շվաքարան թիվ 2	320.8
Ընդհանուր կառուցապատման մակերես, ներառյալ քանդվող շինությունների մակերեսը	4777.8

Շենքերի սեյսմազինվածության մակարդակը նախատեսված է սեյսմիկ - III գոտու համար (9 Բալ և ավելի):

Բոլոր շինությունների շինարարական աշխատանքներն իրականացնվելու են միաժամանակ: Ըստ նշված բնութագրի ՍՆԻՊ 1.04.03-2008-ի նորմատիվներով նշված աշխատանքների իրականացումը հաշվարկված է 30 ամիս:

Գավառի գյուղատնտեսական քոլեջի վերակառուցման ժամանակ օգտագործվելու են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնե կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ շինհրապարակների տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային կարիքների համար:

02543163
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Աշխատանքների ավարտից հետո մնացորդային բերի հողը՝ նախօրոք հանված և պահեստավորված, 1010մ³ և բուսահողը՝ 1540մ³, կօգտագործվեն տարածքի բարեկարգնման համար, իսկ շինարարական աշխատանքների ժամանակ առաջացած թափոնները՝ 278.0մ³, կտեղափոխվեն Գավառի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում՝ վաճառակալել դրանք այլ կազմակերպություններից:

Գավառի գյուղատնտեսական քոլեջը ներկայում ապահովված է խմելու ջրով, կոյուղու, էլեկտրամատակարարման և գազամատակարարման համակարգերով, որոնք միացած են Գավառի քաղաքային ցանցերին:

Նոր կառուցվող շինությունների ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացներն իրականացվելու են գործող շինարարական նորմերի ու տեխնիկական պայմանների համաձայն:

Ջրատարում վթարների և վերանորոգումների ժամանակ ջրամատակարարման անընդհատությունն ապահովելու, ինչպես նաև ներքին հակահրդեհային ջրաքանակ ապահովելու համար նախատեսվում է պահուստային բաքի տեղադրում, որը միաժամանակ կարգավորող դեր կկատարի:

Աշխատանքների ավարտից հետո տարածքը կբարեկարգվի՝ կիրականացնի կանաչապատում և ծառատունկ: Կանաչապատման աշխատանքները նախատեսվում է իրականացնել՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N108-Ն որոշման դրույթներով:

Տարածքում առկա է ոռոգման համակարգ, որը աշխատանքների ընթացքում կվերանորոգվի:

Գավառի գյուղատնտեսական քոլեջի տարածքը չի առնչվում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, բնության հուշարձանների, պահպանության ենթակա տարածքների, կամ կենսաբազմազանության տեսակների հետ:

Գործունեության ենթակա տարածքում Կարմիր գրքում գրանցված կենդանիներ և բուսատեսակներ չեն հայտնաբերվել:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ ջրցանի իրականացում,
- ջրցանի ծավալների հաշվարկումն իրականացվելու է այնպես, որ բացառվեն մակերևութային հոսքերը և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- պարբերաբար ստուգվելու են շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնացվելու կարգավորում,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը կիրականցվի փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները կծածկվեն համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
РА ЕРЕВАН ул. Ленинян 35 ОГРН 1027700342389 ИНН 7710591235
ՀՀ ԵՐԵՎԱՆ Լենինյան 35 ՕԳՐՆ 1027700342389 ՀՎՀՀ 7710591235
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՓԱԿ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԵՐԵՎԱՆ
ՕԳՐՆ 1027700342389
ՀՎՀՀ 7710591235
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՓԱԿ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԵՐԵՎԱՆ
ՕԳՐՆ 1027700342389
ՀՎՀՀ 7710591235
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

- կանաչապատումը կիրականացվի համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի,
- բետոնի խառնուրդը կգնվի համապատասխան մատակարարներից,
- շինարարական աշխատանքների ժամանակ մշտապես կիրականացվի շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում՝ հրդեհավտանգ թափոններից և աղբից,
- շինարարական աշխատանքների տեղամասերում կտեղադրվեեն հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, կփակցվեն հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կկազմակերպի ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում կներգրավվի ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք կշահագործվեն տեխնիկական նորմալ վիճակում:

Պատճառաբանական մաս. Գավառ քաղաքում, օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, նախարարությունները և Գեղարքունիքի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հայտով ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- Կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համաձայն, մասնավորապես, ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N263-Ն հրամանով հաստատված՝ «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» ՀՀՇՆ30-01-2014 շինարարական նորմերի պահանջներով:
- Քաղաքաշինություն նորմերի պահանջներից ելնելով պահպանել շինհրապարակում աշխատանքային անվտանգության կանոնները, բանվորների արտահագուստի և հիգիենայի պահանջները:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Գավառի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և պահպանումը:

- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն և աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Զանգված» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Գավառի ակադեմիկոս Ա.Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի շենքային պայմանների բարելավման շինարարական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ Հ. Մեսրոպյան